# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 892-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումը և հաշվի առնելով Արսեն Նորիկի Ծամազյանի 28.06.2023 թվականին տրված հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի գյուղ Կողբ 11-041-0129-0008 ծածկագրով 0.0711 հա մակերեսով հողամասում ավտոտնակ կառուցելու նպատակով տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

2. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ Արմեն Աղաբաբյանին՝ նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր և փաստաթղթերը տրամադրել 1 հողամասի սեփականատեր Արսեն Նորիկի Ծամազյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 04
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

04 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 893-Ա

### ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի 2024 թվականի բյուջեն կազմելու նպատակով Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, վարչական ղեկավարներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և բյուջետային հիմնարկների տնօրեններին հանձնարարել մինչև 2023 թվականի հոկտեմբերի 15-ը ներկայացնել անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ հայտեր, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:
2. Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետին՝ Նոյեմբերյան համայնքի 2024 թվականի բյուջեի նախագիծը կազմելու նպատակով սահմանել աշխատանքների իրականացման ժամանակացույց՝ ըստ հավելվածի:
3. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱՔԱՐՅԱՆ

2023 թ. հուլիսի 04
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 894-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրում գտնվող՝ 11-056-0038-0005, 11-056-0038-0007 և 11-056-0038-0008 կադաստրային ծածկագրերով հողամասից միավորված 0.0435 հա մակերեսով անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, գ. Ջուջևան 2-րդ փողոց, 2 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4116:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱՔԱՐՅԱՆ

2023 թ. հուլիսի 04
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 895-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ կետով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 11-056-0038-0005 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել 0.04255 հա մակերեսով հողամաս և առանձնացված հողամասը միավորել 11-056-0038-0007 ծածկագրով 0.00087 հա մակերեսով և 11-056-0038-0008 ծածկագրով 0.00008 հա մակերեսով հողամասերի հետ (նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 04
ք.Նոյեմբերյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 896-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33-րդ, 34-րդ, 34.2-րդ 35-րդ և 35.1 կետերով, հաշվի առնելով, որ Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող գ. Ջուջևան, 6-րդ փողոց, 2 բնակելի տուն հասցեում գտնվող 0.04350 հա մակերեսով՝ հողամասում առկա ինքնակամ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հաշվի առնելով Ջահան Յուրիկի Իսրայելյանի կողմից տրված դիմումը՝ (հաշվառման ծածկագիր 2023TFJJ2E)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Նոյեմբերյան համայնքի գ. Ջուջևան, 6-րդ փողոց, 2 բնակելի տուն հասցեում գտնվող 0.04350 հա մակերեսով հողամասում Ջահան Յուրիկի Իսրայելյանի կողմից ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 217.69 քմ արտաքին մակերեսով կառույցները:

2. Նոյեմբերյան համայնքի գ. Ջուջևան, 6-րդ փողոց, 2 բնակելի տուն հասցեում գտնվող 0.04350 հա մակերեսով հողամասում Ջահան Յուրիկի Իսրայելյանի կողմից ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 217.69 քմ արտաքին մակերեսով կառույցների նկատմամբ ճանաչել Նոյեմբերյան համայնքի սեփականության իրավունքը՝ սպասարկման համար նախատեսված 0.04350 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամասով:

3. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին սույն որոշմամբ օրինականացված կառույցների նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկությամբ դիմել ինքնակամ կառույցն իրականացրած Ջահան Յուրիկի Իսրայելյանին՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով շինությունները՝ 485250 ՀՀ դրամ արժեքով (217.69x2229) և նրա սպասարկման համար անհրաժեշտ 0.04350 հա մակերեսով հողամասը՝ 146450 ՀՀ դրամ արժեքով (435x336.6) ձեռք բերելու համար:

4. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱՔԱՐՅԱՆ

2023 թ. հուլիսի 04
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 897-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի 11-012-0102-0005 կադաստրային ծածկագրով հողամասից 0.00172 հա հողամասին տրամադրել հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, քաղաք Այրում, Թումանյան փողոց, 5/30 հողամաս հասցեում, փոստային դասիչ 4102:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍՈՂԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 06
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 898-Ա

## ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 178-Ա որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած՝ Հարություն Համբարձումի Կարապետյանի կողմից (ն/բ՝ 001167220, տրված 25.03.2014 թվականին, 047-ի կողմից) 20.06.2023 թվականին տրված համաձայնությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղ Բագրատաշեն 1-ին փողոց թիվ 13/16 հասցեում գտնվող 0.00528 հա մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 11-016-0042-0004, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) առկա օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված ընդհանուր՝ 30.27 քմ արտաքին մակերեսով կառույցը՝ խանութ, սանհանգույց, պարիսպ և կառույցի սպասարկման ու պահպանության համար նախատեսված 0.00528 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել կառույցն իրականացրած՝ Հարություն Համբարձումի Կարապետյանին:
2. Հարություն Համբարձումի Կարապետյանը Նոյեմբերյանի համայնքապետարանի բյուջե պետք է վճարի՝ 238200 /30.27 x 7866/ ՀՀ դրամ 900395112122 հաշվին, որպես կառույցի օտարման գին և 27200 /52.8 x 514.8/ ՀՀ դրամ 900395112106 հաշվին (կադաստրային արժեք), որպես հողամասի օտարման գին:
3. Վճարելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ., հուլիսի 06
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush.mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 899-Ա

## ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 184-Ա որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած՝ Արմեն Գևորգի Կիրակոսյանի կողմից (Ն/Բ՝ 004080420, տրված 04.08.2014 թվականին, 047-ի կողմից) 28.06.2023 թվականին տրված համաձայնությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղ Բագրատաշեն 2-րդ փողոց թիվ 19 խանութ հասցեում գտնվող 0.00329 հա մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 11-016-0045-0018, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) առկա օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված 18.8 քմ արտաքին մակերեսով կառույցը՝ խանութ և կառույցի սպասարկման ու պահպանության համար նախատեսված 0.00329 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել կառույցն իրականացրած՝ Արմեն Գևորգի Կիրակոսյանին:

2. Արմեն Գևորգի Կիրակոսյանը Նոյեմբերյանի համայնքապետարանի բյուջե պետք է վճարի՝ 147900 /18.8 x 7866/ ՀՀ դրամ 900395112122 հաշվին, որպես կառույցի օտարման գին և 16950 /32.9 x 514.8/ ՀՀ դրամ 900395112106 հաշվին (կադաստրային արժեք), որպես հողամասի օտարման գին:

3. Վճարելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 06
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 900-Ա

### ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտեր մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 28.06.2023 թվականի 194-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյանի քաղաքապետարանի և Անդրանիկ Լիպարիտի Անանյանի միջև 08.10.2008 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 5.1 կետում «25 (քսանհինգ) տարի ժամկետով» բառերը փոխարինել «մինչև 31.12.2023 թվականը» բառերով:

2. Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Անանյանին՝

1) Իրավահաստատող փաստաթղթերը ներկայացնել համապատասխան նոտարական տարածք և ձեռնարկել միջոցներ՝ գործարքում կատարվող փոփոխությունը նոտարի կողմից վավերացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2023 թ. հուլիսի 06
ք. Նոյեմբերյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 901-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով «ՌԵԿՈՆ» ՍՊԸ-ի կողմից 28.03.2023 թվականին հանութագրման և չափագրման արդյունքում 07.04.2023 թվականին տրված հողամասի հատակագիծը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատակագծով ներկայացված հողամասը չի գտնվում 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Բերդավան բնակավայրում գտնվող 11-019-0334-0001 կադաստրային ծածկագրով հողամասի ճշտված սահմանները՝ ըստ կից ներկայացվող հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 06
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
(0266)22703, (0266)22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 902-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով «ՌԵԿՈՆ» ՍՊԸ-ի կողմից 28.03.2023 թվականին հանութագրման և չափագրման արդյունքում 07.04.2023 թվականին տրված հողամասի հատակագիծը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը որ հատակագծով ներկայացված հողամասը չի գտնվում 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Բերդավան բնակավայրում գտնվող 11-019-0219-0002 կադաստրային ծածկագրով հողամասի ճշտված սահմանները՝ ըստ կից ներկայացվող հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՂԱԲԱՐՅԱՆ

2023 թ. հուլիսի 06
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavushmta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 903-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշումը, Նոյեմբերյան համայնքի ավագանու 06/12/2022 թվականի թիվ 231-Ն որոշման 1-ին կետը և հաշվի առնելով Սոֆյա Արարատի Մնացականյանի 30.06.2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սոֆյա Արարատի Մնացականյանին տալ շինարարության թույլտվություն՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք ք. Այրում, Բարեկամության փողոց, 17/27 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 11-012-0112-0030) ավտոտնակի քանդման և ամառանոցի կառուցման շինարարական աշխատանքների համար:
2. Սեփականատերը պարտավոր է Նոյեմբերյանի համայնքապետարանի 900395101075 հաշվեհամարին մուծել 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 07
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 904-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՂԱԲԱԺՆԻ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՏՎԱԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և հաշվի առնելով Ռաչիկ Պետոյանի 03.07.2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ռաչիկ Մելիքսեթի Պետոյանի ընտանիքին սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնից ավել օգտագործվող 11-043-0124-0003 ծածկագրով 0.04953 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Ռաչիկ Մելիքսեթի Պետոյանի (ծնված 05.08.1967 թվականին) սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 07
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 905-Ա

## ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 181-Ա որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած՝ Մերուժան Սուրենի և Ջուլիետա Սուրենի Չիլինգարյանների կողմից (AU0666213, տրված 31.03.2022 թվականին, 047-ի կողմից և AU0379696, տրված 04.08.2021 թվականին, 047-ի կողմից ) 06.07.2023 թվականին տրված համաձայնությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող քաղաք Այրում Բարեկամության փողոց թիվ 17/38 ավտոտնակ հասցեում գտնվող 0.01145 հա մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 11-012-0115-0086, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) առկա օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված 44.85 քմ արտաքին մակերեսով կառույցը՝ ավտոտնակ, սպասարկման ու պահպանության համար նախատեսված 0.01145 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել կառույցն իրականացրած՝ Մերուժան Սուրենի և Ջուլիետա Սուրենի Չիլինգարյաններին:

2. Մերուժան Սուրենի և Ջուլիետա Սուրենի Չիլինգարյանները Նոյեմբերյանի համայնքապետարանի բյուջե պետք է վճարեն՝ 54230 /44,85 x 1209/ ՀՀ դրամ 900395119135 հաշվին, որպես կառույցի օտարման գին և 139810 /114,5 x 1221/ ՀՀ դրամ 900395119127 հաշվին (կադաստրային արժեք), որպես հողամասի օտարման գին:

3. Վճարելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱՐՅԱՆ

2023 թ. հուլիսի 07
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 906-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԷԴՈՒԱՐԴ ԳԵՈՐԳԻԻ ՄԱՐԿԱՐՈՎԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով 2017 թվականի մարտի 03-ի Այրում համայնքի ավագանու թիվ 13-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնք գյուղ Հաղթանակ 1-ին փողոց շենք 2 բնակարան 23 հասցեում գտնվող 50.2 քմ բնակելի մակերեսով բնակարանը ուղղակի վաճառքով օտարել փաստացի տիրապետող Էդուարդ Գեորգիի Մարկարովին՝ 25100 (քսանհինգ հազարհարյուր) ՀՀ դրամ արժեքով, որը պետք է վճարվի Նոյեմբերյան համայնքի 900395102131 հաշվեհամարին (սեփականության վկայական թիվ 22062023-11-0041):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 07
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22203, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 907-Ա

## ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, և հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 28.06.2023 թվականի 174-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյանի համայնքապետարանի Երևանյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող վարչական շենքի երրորդ հարկից որպես աշխատասենյակ 40 քմ մակերեսով տարածքը 5 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՕՖ Հայաստանյան մասնաճյուղին:

2. Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Անանյանին՝

իրավահաստատող փաստաթղթերը ներկայացնել համապատասխան նոտարական տարածք և ձեռնարկել միջոցներ՝ կատարվող գործարքը նոտարի կողմից վավերացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՏԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 10
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 908-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի քաղաք Նոյեմբերյան 11-004-0130-0019 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, քաղաք Նոյեմբերյան Ս.Շահումյան փողոց, 26 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2023 թ. հուլիսի 10
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/20393, noyemberyan.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ
10 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 909-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշումը և հաշվի առնելով «ՀԵՑ» ՓԲ ընկերության դիմում հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կառուցապատող «ՀԵՑ» ՓԲ ընկերությանը տալ շինարարության թույլտվություն ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, քաղաք Այրում Բարեկամության փողոց թիվ 17/27 հասցեում գտնվող Սոֆյա Արարատի Մնացականյանին պատկանող տարածքի 0.4 կվ էլեկտրամատակարարման 10928-ԷՄ աշխատանքների համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱՐԱԲԱՅԱՆ

2023 թ. հուլիսի 10
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 910 Ա

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով «Ձոն ծաղկանց» և գործագործության միջոցառումների համար ծախսեր կատարելու անհրաժեշտությունը և Նոյեմբերյան համայնքի «Մշակույթի կենտրոն» հիմնարկի տնօրենի զեկուցագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Նոյեմբերյան համայնքի բյուջեից փոխանցել 71670 (յոթանասունմեկ հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ «Իրինա Հարությունյան» ԱՁ-ին:
2. Որոշման կատարումը հանձնարարել Նոյեմբերյան համայնքի «Մշակույթի կենտրոն» հիմնարկի հաշվապահ Կարդիթեր Անանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 10
ք. Նոյեմբերյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Նոյեմբերյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 911-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0129-0033 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, քաղաք Նոյեմբերյան, Տիեզերագնացների փողոց, 26/1 բնակելի տուն հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

2023 թ. հուլիսի 10
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Նոյեմբերյան 4
0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 912-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 191-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ղեբեղավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 0.855 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (ծածկագիր 11-024-0204-0002, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կոռիգավոր) վարձավճարի փոփոխություն կատարելու համար՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձավճարը սահմանել 23000 ՀՀ դրամ տարեկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 913-Ա

### ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 192-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Դեբեդավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 1.10996 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (ծածկագիր 11-024-0154-0025, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր) վարձավճարի փոփոխություն կատարելու համար՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձավճարը սահմանել 20000 ՀՀ դրամ տարեկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 914-Ա

## ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով և 59-րդ հոդվածով և «Գույքի նկատմամբ պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 11-004-0040-0023 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացնել՝ 0,00418 հա մակերեսով հողամաս:

2.Առանձնացված 0,00418 հա մակերեսով հողամասը որպես առանձին գույքային միավոր պետական գրանցում կատարելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavushmta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 915-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Նոյեմբերյան քաղաքի 11-004-0040-0023 կադաստրային ծածկագրով անշարժ գույքից առանձնացված 0,00418 հա մակերեսով հողամասին տալ հասցե՝ գրանցելով համայնք Նոյեմբերյան, քաղաք Նոյեմբերյան, Յու. Գագարինի փողոց 4/7 հողամաս հասցեում, փոստային դասիչ 4101:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՂԱԲԱՐՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
0266/22703, 0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 202 թվականի N 916-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 193-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Տալ համաձայնություն ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ղեբեդավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 0.98891 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (ծածկագիր 11-024-0154-0017, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր) վարձավճարի փոփոխություն կատարելու համար՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձավճարը սահմանել 20000 ՀՀ դրամ տարեկան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱԶԱՐԲԱՐՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

11 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 917-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սահմանել Նոյեմբերյան համայնքի 2023 թվականի տեղական բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման եռամսյակային համամասնությունները։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 918-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշումը, Նոյեմբերյան համայնքի ավագանու 06/12/2022 թվականի թիվ 231-Ն որոշման 1-ին կետը և հաշվի առնելով Սիմոն Սարգսի Մուղդուսյանի 03 հուլիսի2023 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սիմոն Սարգսի Մուղդուսյանին տալ շինարարության թույլտվություն՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք գյուղ Բերդավան, 4-րդ փողոց, 17 բն. տուն հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 11-019-0101-0005) բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքների համար: Սեփականատերը պարտավոր է Նոյեմբերյանի համայնքապետարանի 900395101075 հաշվեհամարին մուծել 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Մ[illegible]ԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

11 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 919-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 10 հունիսի 2008 թվականի օրենքի 1-ին հոդվածով, 18.05.2006 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության N 912-Ն որոշման կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 18-րդ կետերով հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողամասը չի մտնում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ և չեն հակասում քաղաքաշինական նորմերին, ինչպես նաև հիմք ընդունելով Գագիկ Գրիշայի Ազատյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի գ. Բերդավան, 18-րդ փողոց, 8 բնակելի տուն հասցեում (ծածկագիր 11-019-0099-0004) Գոհար Գրիշայի Ազատյանին (ծնված 07.02.1974 թվականին) Գագիկ Գրիշայի Ազատյանին (ծնված 26.04.1972 թվականին) ժառանգության իրավունքով պատկանող 0.056 հա մակերեսով հողամասում (նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) առկա ներքին մակերեսով՝

Բնակելի տան կիսանկուղի՝ 37.80 քմ, կառուցված 1952 թվականին,

Բնակելի տան բ/պ կամ ա/հ կիսանկուղի՝ 7.60 քմ, կառուցված 1952 թվականին,

Բնակելի տան՝ 73.90 քմ, կառուցված 1952 թվականին,

Բնակելի տան բ/պ կամ ա/հ՝ 4.60 քմ, կառուցված 1952 թվականին,

Սանհանգույցի՝ 8.20 քմ, կառուցված 1988 թվականին,

Ծածկի՝ 20.80 քմ, կառուցված 1952 թվականին,

Ծածկի՝ 30.40 քմ, կառուցված 1972 թվականին,

նկատմամբ ճանաչել Գագիկ Գրիշայի Ազատյանի (ծնված 26.04.1972 թվականին) Գոհար Գրիշայի Ազատյանի (ծնված 07.02.1974 թվականին) սեփականության իրավունքը:

2. Գոհար Գրիշայի Ազատյանի և Գագիկ Գրիշայի Ազատյանի սեփականությունը հանդիսացող Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի գ. Բերդավան 18-րդ փողոց, 8 բնակելի տուն հասցեում գտնվող, 11-019-0099-0004 ծածկագրով հողամասում (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) առկա ինքնակամ ընդհանուր 47.3125 քմ մակերեսով կառույցները՝ սանհանգույցը, անասնաշենքը, ավտոտնակը և ծածկը ճանաչել օրինական (հաշվառման ծածկագիր 20236R883P):

3. Օրինական ճանաչված օժանդակ շինությունների համար սահմանել օրինականացման վճար՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2023 թ. հուլիսի 11
ք. Նոյեմբերյան